

ԿԵՆՍԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

9-րդ դասարանի ավարտական քննությունների ուղեցույց

Թեստի կառուցվածքը

Քննական թեստի առաջադրանքների բաշխումն ըստ ներկայացման ձևի

Հ/հ	Առաջադրանքները ըստ ներկայացման ձևի	Առաջադրանքների քանակն ըստ մասերի	Առաջադրանքների բաշխումն ըստ միավորների
1.	ընտրովի պատասխանով	24	24
2.	կարճ պատասխանով	11	11
3.	ընդարձակ պատասխանով	2	5
	ընդամենը	37	40

Առաջադրանքների բաշխումն ըստ ծրագրային նյութի բաժինների

Հ/հ	ԹԵՄԱ	ՄԻԱՎՈՐԸ
1.	Բույսեր, բակտերիաներ, սնկեր	3
2.	Կենդանիներ	4
3.	Մարդ	13
4.	Ընդհանուր օրինաչափություններ	20
	Ընդամենը	40

Առաջադրանքների բաշխումն ըստ ստուգվող գործունեության տեսակների

Կենսաբանության թեստի բովանդակության ընտրությունը պայմանավորված է հետևյալ կարողությունների ստուգման անհրաժեշտությամբ.

- կենսաբանական պրոցեսների և երևույթների անվանում
- կենսաբանական պրոցեսների և երևույթների հաջորդականության իմացություն և պարզաբանում
- կենսաբանական երևույթների և կենսահամակարգերի կառուցվածքի ու ֆունկցիայի միջև պատճառահետևանքային կապերի համապատասխանության որոշում
- կենսաբանական պրոցեսների և երևույթների վերլուծում
- կենսաբանական խնդիրներ լուծելու ունակություն
- տրամաբանական մտածողություն և ստեղծագործական ներուժ

Քննական առաջադրանքի գնահատման չափանիշները

Ընտրովի պատասխաններ են պահանջում 1-24-րդ առաջադրանքները, որոնցից յուրաքանչյուրի ճիշտ պատասխանը գնահատվում է 1 միավոր:

Կենսաբանության թեստի կարճ պատասխան պահանջող առաջադրանքներում (25-35-րդ) անհրաժեշտ է գրել պահանջվող թիվը, բառը, բառակապակցությունը: Գիշտ պատասխանի համար տրվում է 1 միավոր:

Ընդարձակ պատասխան պահանջող առաջադրանքները երկուսն են (36-րդ, 37-րդ): Յուրաքանչյուր ենթահարցի, ենթակետի ճիշտ պատասխանի համար տրվում է մեկ միավոր:

Թեստի առաջադրանքների նմուշներ

1. Ընտրովի պատասխանով առաջադրանք

Ի՞նչն է մտնում արտաքին ականջի կազմության մեջ:

- 1) հիմային թաղանթը
- 2) ականջախեցին
- 3) մուրճիկը
- 4) խխուճը

2. Կարճ պատասխանով առաջադրանք.

Ո՞ր որդերի տիպին է պատկանում մարդու ասկարիդը:

Պատասխան՝ _____ :